# Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

## *ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ԹԻՎ ԹԻՎ 169-Ա, 170-Ա, ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ ԹԻՎ 189-Ա-193-Ա, 198-Ա, ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ 200-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Թիվ թիվ 169-Ա որոշման 2-րդ կետում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին և 170-Ա որոշման 2-րդ կետում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմանը կատարված հղումներն անհրաժեշտ էր գրառել որոշումների նախաբաններում՝ *169-Ա որոշման դեպքում նշելով օրենքի օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը*: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր, իսկ հիմնական մասում շարադրվում են իրավական նորմերը:

Թիվ 170-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության որոշումներին կատարված հղումները սխալ են գրառված: Բացի այդ, որոշման մեջ հղում է կատարված ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի «Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին» N 470-Ն որոշմանը, որը ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի N 462 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և 2002 թվականի հուլիսի 25-ի N 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1023-Ն որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած:

Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի, ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ բնակավայրում շինությունների գործակից է սահմանված է 0.1028, իսկ որոշման մեջ ինքնակամ կառուցված շինության և ինքնակամ բացված դռների ու պատուհանների օրինականացման համար վճարման ենթակա գումարը հաշվարկվել է 0.1081 գործակցի կիրառմամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 8.1-րդ և 18-

րդ կետի «դ» ենթակետի, ինքնակամ բացված կամ ձևաձոխված յուրաքանչյուր դռան և/կամ պատուհանի համար վճարում է սահմանված բազային տուրքի 10- ապատիկի չափով, գույքի գործակցի կիրառմամբ, մինչդեռ որոշման մեջ վճարման ենթակա գումարի չափը հաշվարկվել է ինքնակամ բացված կամ ձևափոխված դռների և/կամ պատուհանների մակերեսների հաշվարկով։

Թիվ թիվ 189-Ա-193-Ա և 200-Ա որոշումներում հղում է կատարվել ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 828-Ն որոշմանը, որով կարգավորվում են հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացումը և հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունը։ Մինչդեռ Մարալիկ քաղաքաը ունի հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (տարածական պլանավորման փաստաթղթեր, գլխավոր հատակագիծ)։ Հետևաբար հողամասի գուրծառնական նշանակություն փոփոխելիս պետք է ղեկավարվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգով»։

Թիվ 198-Ա որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

**02.06.2022 թ.**